# ՆԿԱՐԱԳԻՐ

**առաջարկվող ապրանքի ամբողջական**

Մեդքորփ ՍՊԸ-ն ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/65 ծածկագրով կազմակերպված էլեկտրոնային աճուրդին մասնակցելու շրջանակում ներկայացնում է իր կողմից առաջարկվող ապրանքի ամբողջական նկարագիրը

| Չափաբաժնի համար | Առաջարկվող ապրանքի | | | | |
|---|---|---|---|---|---|
| | ֆիրմային անվանումը | ապրանքային նշանը | մակնիշը | արտադրողի անվանումը | տեխնիկական բնութագիրը |
| 33 | | On-x | On-x | On-x Life Technologies, Inc | Սրտի փականի մեխանիկական պրոտեզ աորտալ և միտրալ, բաղկացած է երկու կիսակլոր թերթիկներից, որոնք պտտվում են փականի իրանին շառնիռներով ամրացած պիրոլիտիկ ածխաջրից կամ մետաղից հենակների շուրջը, ինչի արդյունքում առաջանում է երեք անցք: Երբ արյան հոսքը սեղմում է փականը, երկու կիսաշրջանաձև թերթիկները թեքվում են փականի օղակից և արյան հոսքը հոսում է երեք անցքերի մեջ, որից հետո փականի թերթիկները նորից փակվում են: |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | Թերթիկների պտույտը փականի հենակների շուրջ իրականացվում է ստիպողական եղանակով բժշկի կողմից իմպլանտացիայի ժամանակ համրավետության համար: Թերթիկների նյութը պիրոլիտիկ ածխաջուր է, առանց կրեմնի խառնուրդի, ինչը հնարավորություն է տալիս զգալիորեն նվազեցնել պրոթեզի թրոմբոգենությունը` պայմանավորված այն հանգամանքով, որ պրոթեզի ներքին մակերեսը ավելի լավ փայլեցված է և պարունակում է զգալիորեն ավելի քիչ կոպտություն` համեմատած կրեմնի խառնուրդ պարունակող պիրոլիտիկ ածխածնի հետ, ինչը նվազեցնում է արյան մակարդման գործընթացի ակտիվացումը: Թերթիկների բացման անկյունը ոչ պակաս քան 86° է, ինչը օգնում է մեծացնել փականի լուսանցքը, որն էլ նվազեցնում է պրոթեզի ներսում տուրբուլենտ հոսքերը և բարելավում հեմոդինամիկ բնութագրերը, նվազեցնում արյան բջիջների վնասը և, որպես հետևանք, փականի հետ կապված թրոմբի ձևավորումը: Թերթիկների |

| | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|
| | | | | | | էքսկուրսիան լրիվ բացումից մինչև լրիվ փակումը կազմում է ոչ ավելի, քան 53 °, ինչը արագացնում է փականների ամբողջական փակումը և նվազեցնում ռեգուրգիտացիան:<br>Կրկնակի չափսերով փականի մոդելների առկայություն տարբեր տրամագծերի ֆիբրոզային օղակների մեջ տեղադրելու համար, ինչը նվազեցնում է այն ռիսկը, որ որոշ հիվանդներ չեն վիրահատվի պրոթեզի պահանջվող չափի բացակայության պատճառով:<br>Աօրտալ փականի չափսերը 19, 21, 23, 25 և 27/29 որոնց ներքին անցքի մակերեսը համապատասխանաբար ոչ պակաս քան 2,22 ք.սմ, 2,79 ք.սմ, 3,42 ք.սմ., 4,09 ք.սմ. և 4,09 ք.սմ,<br>Միտրալ փականի չափսերը 25, 27/29 և 31/33 որոնց ներքին անցքի մակերեսը ոչ պակաս քան 4.09 ք.սմ:<br>Ապրանքի մատակարարման փուլում Վաճառողը պետք է տրամադրի արտադրողի կողմից ներկայացվող համապատասխանության հավաստագիր, ավտորիզացիոն(երաշխիքային-լիազոր) նամակ, ծագման սերտիֆիկատ: |

# ПОЛНОЕ ОПИСАНИЕ

**предлагаемого товара**

Մեղքորփ ՍՊԸ в качестве участника в рамках участия в электронном аукционе под кодом ՆՄԲԿ-ԷԱՃԱՊՁԲ-26/65 ниже представляет полное описание предлагаемого им товара.

| Номер лота | Предлагаемый товар | | | | |
|---|---|---|---|---|---|
| | фирменное наименование | товарный знак | марка | наименование производителя | технические характеристики |
| 33 | - | - | - | - | - |